Էդվին Մեսրոպյան, Գաջեթների օգտագործման առավելությունները և առաջացրած խնդիրները

Էդվին Մեսրոպյանի հետազոտական աշխատանքի թեման է «Գաջեթների օգտագործման առավելությունները և առաջացրած խնդիրները», որը կազմված է ներածությունից, երեք գլուխից, եզրակացությունից, գրականության ցանկից: Հետազոտական աշխատանքի կառուցվածքային բաղկացուցիչները պահպանված են:

Ներածության մեջ հեղինակը խոսում է աշխատանքի կառուցվածքի մասին, ներկայացնում է աշխատանքի նպատակը, խնդիրները: Լավ է, որ ձևակերպված է աշխատանքի արդիականությունը: Հեղինակի շարադրանքը թեթև է, պարզ, հետաքրքիր:

Առաջին գլխում խոսել է գաջեթների մասին, ներկայացրել գաջեթների տեսակները: Այս գլուխը շատ կարևոր է, քանի որ կոնկրետ նշված է, թե ինչ է գաջեթը և ինչ տեսակներ ունի: Թեև տեխնոլոգիական զարգացումը մեծ չափերի է հասել, մեզ շրջապատում են բազմաթիվ տեխնիկաներ, սակայն «գաջեթ» տերմինը մեր իրականության մեջ գործածական չէ:

Երկրորդ գլխում ներկայացված են գաջեթների վնասակար և օգտակար կողմերը: Կարևոր է դրանց իմացությունը՝ ծայրահեղությունների մեջ չընկնելու համար:

Երրորդ գլխում ներկայացված էր հեղինակի կողմից արված ուսումնասիրությունը՝ բանավոր հարցման միջոցով: Հարցման արդյունքները զարմանալի չեն, մեր իրականությունն է՝ առօրյա խնդիրներով:

Եզրակցությունում հեղինակն ամփոփել է իր ասելիքը:

Կցված է օգտագործած գրականության ցանկը, լավ է, որ հեղինակն օգտագործել է օտարալեզու աղբյուրներ, ստացվում է նաև թարգմանական գործունեություն է իրականացրել:

Կարծում եմ՝ հեղինակը հստակ շարադրել է իր ասելիքը, աշխատանքի բովանդակությունը համապատասխանում է վերնագրին, կառաջարկեի, որ գլուխ երրորդում բանավոր հարցման արդյունքները կցեր գրառած կամ ձայնագրած տարբերակով:

Կարծում եմ՝ աշխատանքն արժանի է բարձր գնահատականի:

Գրախոս՝ Զարինե Պապոյան